ՎԱՐԴԱՏՈՆ

... ԵՎ ՆՈՐԻՑ ՍԱՅԱԹՆՈՎՅԱՆ ՎԱՐԴԱՏՈՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Ինչպես նշված է ծախ կողմում զետեղված հայտարարության մեջ, մայիսի 31-ին Վրաստանի մայրաքաղաքն արդեն 101-րդ անգամ կնշի Մեծն Սայաթ-Նովայի Վարդատոնը: Հետաքրքիր է, նախորդ տարիներին, ասենք 30 տարի առաջ, ինչպե՞ս էին Թբիլիսիում նշում այդ տոնը: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում 1985 թվականի վրանցական «Կոմունիստի» պաշտոնաթերթում տպագրված Վարդատոնին նվիրված հանդիսության հաշվետվությունը (աննշան կրճատումներով):

...Մայիսի 31-ին Սայաթ-Նովայի տաղանդի երկրպագուները նորից հավաքվեցին մայրաքաղաքի «Մեյդան» թաղամասում գտնվող Գորգասալու հրապարակում: Քաղաքի այդ հին թաղամասը զարդարվեց պոետի պատկերներով, ում ծննդյան 275-ամյակը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ, լայնորեն նշվելու է այս տարի:

Հանրահավաքը բացեց Վրաստանի գրողների միության վարչության նախագահ Գ. Ցիցիշվիլին: Բանաստեղծի եւ նրա ստեղծագործությունների մասին խոսեց Վրաստանի գրողների միության վարչության քարտուղար Ջ.Չարկվիանին: Հյուրերի, Հայաստանի գրականագետների պատվիրակության անունից, որի կազմում էին նաեւ լրագրողներ, գրողներ, հայկական սփյուռքի ներկայացուցիչներ, ելույթ ունեցավ ճանաչված արձակագիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ս.Խանզադյանը: Անդրկովկասյան եղբայրական հանրապետությունների գրական կապերի մասին խոսեցին գրականագետ, պրոֆեսոր Բ.Արվելաձեն, Շոթա Ռուսթավելու անվան վրաց գրականության Պատմության ինստիտուտի ասպիրանտ Գ.Բարամիձեն, գրականագետ Մ.Մելքոնյանը, թարգմանիչներ Մ.Բախթիարլին եւ Գ.Շահնազարը, բանաստեղծ Ս.Սիմավորյանը, գրող Բ.Սեյրանյանը:

Հանրահավաքից հետո հրապարակում անցկացվեց համերգ, որտեղ հնչեցին արեւելյան գործիքները, կատարվեցին Սայաթ-Նովայի բանաստեղծություններից ու երգերից, անդրկովկասյան ժողովուրդների պարերից:

Տոնակատարությանը ներկա էին ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Է.Շեւարդնաձեն, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ.Ենուքիձեն, կուսակցության Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար Վ.Ալավիձեն:

Նույն երեկոյան Թբիլիսիի Ս.Շահումյանի անվան հայկական թատրոնում կայացավ Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված տոնական երեկո:

ԳԻՐ ՍԻՐԵ, ՂԱԼԱՄ ՍԻՐԵ, ԴԱՎԹԱՐ ՍԻՐԵ...

1914 թվականից, ամեն տարի, մայիսի վերջին կիրակի օրը, Թբիլիսիում տեղի է ունենում միջնադարի հայ աշուղ-բանաստեղծ, սիրո, գիր ու գրչի ջատագով Սայաթ-Նովայի (1722-1795) ոգեկոչման հանդիսությունը:

Մեծ բանաստեղծի տոնը այս տարի կնշվի մայիսի 31-ին, ժամը 13:00-ին, Սուրբ Գեւորգ եկեղեցուն կից Գորգասալու հրապարակում: Ժողովրդական տոնախմբությանը կմասնակցեն հյուրեր Վրաստանի տարբեր շրջաններից ու քաղաքներից, Հայաստանից:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2015

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԻՉՆԵՐԸ՝ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ

Մայիսի 19-ին «Եվրատեսիլ 2015»-ի առաջին կիսաեզրափակիչ փուլում կայացած քվեարկության արդյունքներով, «Եվրատեսիլ-2015»-ում Վրաստանը ներկայացնող Նինո Սուբլատին իր «Warrior» երգով եւ Հայաստանը ներկայացնող «Genealogy» խումբը կշարունակեն պայքարը երգի միջազգային մրցույթի եզրափակիչ փուլում:

Վրաստանի եւ Հայաստանի հետ եզրափակիչ են անցել Ալբանիան, Ռուսաստանը, Ռումինիան, Հունգարիան, Հունաստանը, Էստոնիան, Սերբիան, Բելգիան, Լիտվան, Լեհաստանը, Սլովենիան, Շվեդիան, Նորվեգիան, Մոնտենեգրոն, Կիպրոսը, Ադրբեջանը, Լատվիան, Իսրայելը:

Մրցույթին ուղիղ հեռարձակմամբ, ինչպես նաեւ վիրտուալ տիրույթում հետեւեցին միլիոնավոր մարդիկ աշխարհի տարբեր անկյուններից: 60-րդ՝ հոբելյանական «Եվրատեսիլ»-ին մասնակցում է 40 երկիր:

Մրցույթի եզրափակիչ փուլը կկայանա այսօր՝ մայիսի 23-ին, որի ընթացքում ելույթ կունենան նաեւ «Մեծ հնգյակի» երկրները՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան, «Եվրատեսիլ- 2014»-ի հաղթող Ավստրիան, ինչպես նաեւ Ավստրալիան՝ որպես «Եվրատեսիլ- 2015»-ի հյուր:

60-րդ հոբելյանական «Եվրատեսիլ- 2015» երգի միջազգային մրցույթն անցկացվում է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում՝ «Կառուցելով կամուրջներ» նշանաբանի ներքո: Այս տարվա համար ընտրված նշանաբանը խորհրդանշում է Եվրոպան, որը միավորում է բոլորին. մրցույթի կազմակերպիչները կարծում են, որ Եվրատեսիլի միջոցով համախմբվում են մշակույթներ, լեզուներ՝ կառուցելով կամուրջներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՉԿԱՉՎԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՃԱՐ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Մաշկի քաղցկեղի եւ մելանոմայի վաղաժամկետ ախտորոշման նպատակով մայիսի 24-31-ին, «Եվրամելանոմա-2015» համաեվրոպական քարոզարշավի շրջանակներում, Թբիլիսիում, Քութայիսիում, Ռուսթավիում եւ Բաթումիում կանցկացվեն բնակչության անվճար բուժստուգումներ:

25 տարեկանից բարձր բոլոր ցանկացողները, ովքեր մաշկի վրա ունեն կասկածելի նշաններ, արդեն այսօր կարող են զանգել հետեւյալ հեռախոսահամարներով. Թբիլիսի՝ 2-30-54-17, 2-18-22-58, Քութայիսի՝ 24-12-48, Բաթումի՝ 568-10-44-10, Ռուսթավի՝ 228-001, 2-278-485:

Կասկածելի նշանների բացահայտման դեպքում, նյութերը կառաքվեն եվրոպական փորձագետներին, կոնսիլիումի քննարկման համար:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՓԱԿՎԵԼ Է 11 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԸ

Թբիլիսիի էլեկտրավագոնաշինական գործարանի թաղամասը Վարկեթիլիին կապող, Թբիլիսիի ծովի ափով անցնող ճանապարհի 11 կիլոմետրանոց հատվածը փակ է երթեւեկության համար:

Այստեղ սկսվել են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որոնք իրականացվում են «Թբիլիսի-2015» երիտասարդական օլիմպիական փառատոնի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Թբիլիսիի քաղաքապետարանում, վերոնշյալ ճանապարհահատվածի ծածկը փոխարինվելու է ասֆալտաբետոնե երկշերտ ծածկով:

Վերանորոգման աշխատանքների կապակցությամբ, մայիսի 18-ից մինչեւ հուլիսի 15-ը այդ տեղամասով տրանսպորտի երթեւեկությունը կսահմանափակվի: Տրանսպորտը կկարողանա երթեւեկել Թբիլիսյան ծովի աջ ճանապարհահատվածով:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Երոպական գաճաճ պետություն: 9.Հայ հայրենասեր ու մայրասեր բանաստեղծը: 10.Վայրի խոզ:11.Քեֆ, ուտել-խմել: 12.Թուրքի տղան (ժող.): 14.Նահանգ ԱՄՆ-ում: 16.Վայր, որտեղ նավեր են պատրաստում: 18....-հոտով: 20.Մնացուկ, ուտիլ: 21.Ասորեստանի թագավոր: 25.Վրաց նախկին նախարար ... Սուբարի: 26.Վաճառքի տուն: 27.Նոր սկսող, փորձ չունեցող: 28.Մսի մեքենա: 29.Ոչ մրգատու, գեղազարդային: 32.Մակարդ մածունի համար: 33.Հունական ֆիլմ: 36.Հայաստանի մայրաքաղաքներից: 40.... Սկալա: 41.Ճնշել, կեղեքել:43.Ոչ քնած: 44.Դերասանուհի ... Ներսիսյան: 45.Մոտակա, շրջապատում գտնվող: 46.Հավի եւ ձվի ֆերմա Վրաստանում: 47.Քաղաք Բուլղարիայում: 48.Երգչական ձայն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Շուրջերկրյա ճանապարհորդ, աշխարհագետ Ֆեռնան ...: 2.Շքեղ մեքենա: 3.Անդադար, անընդհատ: 4.Պորտուգալիայի մայրաքաղաքը: 5.Գաղտնի, ոչ հայտնի: 7.... Դեմիրճյան (ոչ Դերենիկը): 8.Վրաստանի կրթության եւ գիտության նախարար ... Թամար Սանիկիձե: 13.Կաթից պատրաստված: 14.Գավառ Հայաստանում: 15.Լրիվությամբ, ամբողջապես: 17.Երգչուհի ... Ռոտարու: 19.Հայկական մարզը Օսմանյան կայսրությունում: 20.Հայտնի հրապարակ Թուրքիայում: 22.«Ես ... կուգայի» (հայկական ժող. երգ): 23.Հայկական ֆիլմ: 24.Հույս, ..., սեր: 25.Սուրենը մտերիմների շրջանում: 29.Վայրագ, անգութ, անողոք: 30.Այրել, կրակի մատնել: 31.Հայերենի վերջածանց: 34.ԱՄՆ-ի նահանգներից: 35.Ե.Չարենց «Լենինն ու ...ն»: 37.Հեծյալ հրոսակ: 38.Պանդուխտ, վտարանդի, գաղթական: 39.Ճակատամարտի վայր Հայաստանում: 41.Ամառվա ամիս: 42.Վայրի գազան:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Գիրանալ: 9.Սիրել: 10.Ճալե: 11.Պոտսդամ: 13.Հայֆա: 16.Մկո: 17.Ճուտ: 19.Սամբա: 22.Ագռավ: 24.Գողորս: 25.Սահք: 27.Այցելու: 29.Կոլապս: 32.Մաորի: 33.Երկինք: 35.Կանչ: 38.Դուք: 40.Քաղսի: 41.Գնում: 44.Կզակ: 47.Շրի: 48.Հուդա: 50.Երանի: 51.Հյու: 52.Ուր: 53.Թեփ: 54.Կիր: 55.Նարի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գիյոմ: 2.Գարսո: 3.Գաճաճ: 4.Նսեհ: 5.Գրեյ: 6.Օլգա: 8.Լամուկ: 12.Տկոռ: 14.Աղաղ: 15.Ֆիբր: 18.Ձվալ: 19.Սովոր: 20.Մոդա: 21.Ասես: 23.Ասելիք: 26.Հումք: 28.Յուրդ: 29.Կոխ: 30.Լիկա: 31.Պենս: 34.Կուրարե: 36.Աղծու: 37.Չինարի: 39.Հուր: 42.Նշիկ: 43.Միհր: 45.Ձեթ: 46.Կափ: 48.Հուն: 49.Դուր:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445